Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր
Գլխավոր հոգեբան

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ | Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժին | Գլխավոր հոգեբան, (12-2-ՔՀ12-Մ2-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր հոգեբանն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր հոգեբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր հոգեբաններից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Վանաձոր, Տավրոսի 20

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է այցեր հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանավոր ված անձանց և դատապարտյալներին.
2. դատապարտյալների դիմումների հիման վրա կատարում է կալանավորված անձանց և դատապարտյալների անհատական ընդունելություն և իրականացնում մասնագիտական խորհրդատվություն.
3. իրականացնում է Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատա ռած կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունելություն.
4. իրականացնում է հսկողություն Հիմնարկում հաշվառման վերցված անձանց հետ տարվող աշխատանքների նկատմամբ
5. իրականացնում է հոգեբանական և բացատրական աշխատանքներ Հիմնարկում կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած անձանց հետ

Իրավունքները.

1. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել դատապարտյալների և կալանավորված անձանց վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն
2. ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ բաժնի պետին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների վերաբերյալ.

3. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին.
4. ծանոթանալ դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ներկայացված դիմումների բովանդակություններին, նյութերին.

Պարտականությունները.

1. կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների ա ռկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին.
2. կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հ ոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը.
3. տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն Հիմնարկում հացադուլ, ինքնավնասում, ինքնախեղում կատարած կալանավորվ ած անձանց և դատապարտյալների վերաբերյալ.
4. տեղեկացնել Բաժնի պետին հոգեբանական օգնության կարիք ունեցող կալանավորված անձանց և դատապ արտյալներին կատարած այցերի արդյունքների մասին.
5. կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ հոգեկան հիվանդության նախանշանների, սահմանային վիճակների կամ ինքնավնասման հակումների ա ռկայության դեպքում այդ մասին անհապաղ զեկուցել Բաժնի պետին.
6. կազմել կալանավորված անձանց և դատապարտյալների հետ իրականացված հ ոգեբանական աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1.	Ուղղություն	Սոցիալական գիտություններ, լրագրություն և տեղեկատվական գիտություններ
1.	Ոլորտ	Սոցիալական և վարքաբանական գիտություններ
1.	Ենթաոլորտ	Հոգեբանություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագի տական աշխատանքային ստաժ կամ հոգեբանության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում

    - Բարեվարքություն
    - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
    - Ծրագրերի մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
    - Բանակցությունների վարում
    - Կոնֆլիկտների կառավարում
    - Բողոքների բավարարում
    - Ժամանակի կառավարում
    - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորվա ծ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և դիմումների քննարկման ա ղյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտ ական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացու ցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մար մնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվա ծքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: